

Պատերազմ...

Կենաց ու մահու պայքար: Մարմնովս դող է անցնում անգամ պատերազմ բառն արտաբերելիս: Ինչքա՞ն ցավ, դառնություն կա այդ 8 տառի

մեջ, ինչքա՞ն մարդկային կյանքեր խլեց պատերազմը:

Սեպտեմբերի 27` չարաբաստիկ օր, երբ վայրագ թշնամին նորից խախտեց հրադադարն ու հարձակվեց Արցախ աշխարհի վրա: Հոգիս տակնուվրա եղավ: Աշխարհում ամեն բան խառնվեց իրար: Մտածում էի, թե հերթական հրադադարի խախտումն է, վաղն ամեն ինչ լավ կլինի, բայց...

Ամեն գիշեր գլուխս բարձին դնելուց առաջ աղոթում եմ մեր զինվորների խաղաղ ծառայության ու բարի վերադարձի համար` հույս ունենալով, որ պատերազմը կավարտվի, ու ամեն ինչ անցյալում կմնա: Այսօր պատերազմի 25-րդ օրն է, օրերը մի տեսակ դանդաղ են անցնում, կյանքում կորել են բոլոր հետաքրքրությունները: Հիմա եմ հասկանում, թե ինչ չնչին բաներից եմ նեղվել, լաց եղել` չգիտակցելով, որ կյանքում ավելի կարևոր բաներ էլ կան: Իսկ ամենակարևորը խաղաղությունն է...

Զոհված հերոսների անունները կարդալիս շունչս պահում եմ, միայն թե ծանոթ անուն չհանդիպի, բայց, Աստված իմ, բոլորն էլ մերն են, իմ, քո, նրա հերոսն են: Շնորհակալ եմ, հերոսներ, որ ձեր չապրած տարիները նվիրեցիք մեզ: 2 է որ ձեզնից յուրաքանչյուրը մի տան ճրագ էր, մեկի տղան, մեկի ընկերը...

Ինչպես մորը բացատրես, որ հողն ավելի թանկ էր, քան իր որդին: 2 ես կարող բացատրել...

Ինչպես ասում են, հուլյսը վերջինն է մեռնում: Թող առավոտյան լուեն բոլոր զենքերը, թնդանոթները, թող հերոսները զանգեն իրենց մայրերին ու ասեն.

«Մա՛մ ջան, պատերազմն ավարտվեց, ամեն վտանգ վերջացավ»:

Հեղինակ` Ռոզա Աբրահամյան

Գ